

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Ա.— ՆԵՐԱՌՈՂԵԱՆ ՍՐԲՈՑՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՁԻՆ

(ԹԻՒՂԱՄ. ԹԵՄԱՓԻՍՏԷՆՆԵՑՈՐ)

Ուրախացուք և ցնծացուք տմենեքեան, և պարսկից լիցուք երկնա-
նոցն գնդից, որ ուրախացան ընդ աճումն բազմութեանցն ի ձեռն եկեղեցւոյ առ
մեզ առաւել ուրախութեամբ զսովորական ուրախութիւնն, որ ի վերայ միոյ
մեղաւորի ապաշխարութեան ուրախանային, և սրբ ի վերայ անբաւից և ան-
թիւ բիւրուցն որպիսի՝ ուրախութեամբ ուրախացան. կարծեմ եթէ կարի առա-
ւել մեծապէս ուրախութեամբ, մինչև ցնծային Աթոռք, պարէին, Տէրութիւնք,
ուրախանային ի յանդիմանք, բերկրէին Պետութիւնքն, հրճուէին Զաւարու-
թիւնքն, և մեծապէս բարգաւաճութեամբ տաւնէին ամենայն զըւարթութեք երկե-
նից:

Ե՛կ մերովդ պո մեզ, ու ջորովդ եկիր ապեր դմբս, և մերովդ զքոյն-
սըն գործեցեք իբրև զմեզ, և մեք զքոյն իբրև զմեզ քե պատուեսցուք: Ե՛կ լու-
սաւորիչ խաւարելոցն, որ խաւարալն մտեր, ի մուտս արեգական, և լուսով
պայծառագունաւ արեգակն ծագեցար յարևմտից արեգակասն իմանալի, փո-
խաձեւալ զմարմնական լուսաւորութիւն ընդ ծագումն արեգականս այս իմա-
նալի հոգեւորական լուսաւորութեամբ, և ի կոյմանէ արևմտից լուսաւորեցեք
զաչս մտաց իմանալի բնակողացն արեւելից, ուստի մեք մարմնական աչաւք լու-
սաւորել սովորեմք:

Ե՛կ մարմնաւոր արեգակն ոսկրաշար աստեղ, չառաւելագրուղի լեզու,
լուսաբեր բերան, փերկաճոս չրթուն, ջահակերպ մատունա, նշոյլապնաց ոտս,
երկնաշափ դուռն, լուսաառաւած արտեզուն, արփից սփռող աչս, արեգակնա-
կերպ պարկեր, հրաձեռն նմանեալ կերպարան, բոլորալոյս աշրովքէ, բոցա-
կերպ քէրովքէ, և իբրև բաղմաշալսն, բազմատես լուսաւորիչ, որ բոլոր զամե-
նայն աշխարհն Հայաստանեաց լուսաւորեցեր: Տանչանաց բազմաց ներող,
խրաքանչիւր անդամաւք կրող, իւրաքանչիւրոց լուսաւորող, ծիրանադեհստ
մարտիրոս, բեհեզատեհստ վկայ, կարմրածորձ մարտիկ, պսակապեհստ նահա-
տակ, ջահապեհստ քահանայ, և լուսապեհստ լուսաւորիչ:

Այնպէս և մտանելովն նորա ի բարձրագան արթուն մեծն Հոռմ, հայրա-
պետս այս Հայոց մեծաց, հանդիսացան աղբն արական Հոռմա, պարելով
բերկրէին և մեծապէս ուրախութեամբ տաւնէին, և զմուտ լուսազարդ արեգա-
կանս այս մեծաբէին և ասէին. Ե՛կ կրկին Կեփաս և երկրորդ Պաւլոս: Ո՛վ մե-
ծըջ Գրիգորիոս, կրկին լէ՛մք, յորոյ վերայ շինեցաւ նոր եկեղեցիսն Քի., ուր
և բազինք խորտակեցան կոռցն, կրկին բերան Քի. որ անվեհեր չըջնուին քո
ըշխարհս բաղմաց Հայաստանեաց անցեցեք անհամեմատ անմամբ զվտա-
հացեալ քանքարսն, և հաւատարիմ ծառայ երկրաւոր՝ Տեանն երկնաւորի պաշ-
տանեաւ, մտերիմ, աղիւ և հաւատարիմ, ոչ եթէ հաւատարիմ ի սակաւուն,
այլ ի վերայ անթիւ բաղմաց, ոչ եթէ կացցիս մեկնակ ի վերայ բաղմաց, այլ ի
վերայ բիւրուց բիւրաւորաց:

Ե՛կ մեծ լուսաւորիչ Հայոց մեծաց, եկ մեծաբնալոյ յառաջին ծնելոցն
յԱստուծոյ յազգացն ելլեղացւոց, եկ իմաստունդ որ մեծապէս պատուով ըն-

դուռնեցար ի խորին իմաստնոցն յունաց, եկ մեծաշուն վկայ, որ մեծաւ ճշնութեամբ ճշնեցար, և զթագաւորն իւրով մեծամեծաւքն հնազանդեցուցեր, և ի խաւարագիշեր դրաւիցն, իբրև երկնահոյլ և աշխարհասփիւռ արեգակն ծաղեցար և լուսաւորեցեր զնոսա, և մեծարեցար ի թագաւորէն յունաց, որոյ թագաւորութիւնն մնացէ անասանելի մինչև ի կատարած աշխարհի:

Եկ և պատուեաց յաթոռ Պետրոսի, ով երկրորդ Պետրէ, եկ և փառաւորեաց ի մէջ հանգստարանին Պաւղոսի, ով կրկին նմանող Քրիստոսի: Եւ արդես ոչ եմ բաւական կաթիւ մի ջրով մեծացուցանել զմեծն և զահաւորն զուրբն Գրիգորիոս: Եթե որպիսի զովութեամբ զովեցաւ նա ի հայրապետէն Հռոմա, և յընթանուր ազգացն արիակահայ Հռոմայեցւոց, զոր վերագոյնեալ իմաստնապոյն լեզուն և հանճարագիծ հրէին Պաւղոս և տեղի ցոնեցալ զովեալ ասելով: Հնախ զհոհանած ղԱստուծոյ իմոյ ի ձեռն Յիսուսի, վասն ձեր ամենեցուն, զի հաւառք ձեր պատմեալ են ընդ ամենայն երկիր, և եթէ վկայ է ինձ Աստուած, զոր պաշտեմն հոգւով իմով, յաւնարանի Որդւոյ Նորա, եթե որպէս պիշտատակս ձեր առնեմ. յամենայն ժամ յաղաւթս իմ աղաչելով, զի թերեւ երբեք յաջողեցայ ինձ կամաւքն Աստուծոյ զաղ առ ձեզ, զի անսկապեալ եմ տեսանել զձեզ»¹⁰:

Յանկալիքս այսոցիկ առնս այս, որ նմանող կացուցանէր զինքն Քրիստոսի, այնքան մեծապէս և ջերմ ցանկութեամբ փութային անասնել զկրկին ցանկալի այրս այս, որ հանգոյն Նորա զանաւանացեալ կերպարանն իմ արդ կերպարանեաց, և զխողացեալ պատկերն ի մարդկային կերպս փոխակերպեաց, և իբրև արեգակն երկնապայծառ լուսարձակ բանիւք զորդին խաւարի, արարեալ սրբիս լուծոյ. և ծնանել յԱստուծոյ ի ձեռն Հոգւոյ, որ ժողովելով զբազմութիւնն անուր բնութեան ի միասին, ածէր ի կրկին Յորդանանն յերասիս, երկրորդն Յովհաննէս, որ ոչ մկրտէր ջրով այլ Հոգւովն Սրբով. ուր ոչ մկրտեալ Քրիստոս, այլ զՔրիստոս զղենովին մկրտեալքն, որպէս և մկրտելովն սուրբս այս, վերածայնէր զՊաւղոսական բարբառն և ասէր:

«Որք ի Քրիստոս մկրտեցարուք զՔրիստոս ազգեցեալ էք», անդ ընդ ձայն քահանայապետիս և հայրապետիս այս՝ իլնանէր ձայն Հաւր և աւրհնէր զժողովուրդն, առ որդիս իջնուէր զաւրութիւն Որդւոյ, և ի ձեռնադրութիւն առնս այս Հոգւորէ, Հոգին Սուրբ լուսաւորէր զմկրտեալսն, անդ դասք հրեշտակաց պարէին, և հրեշտակապետաց տաւնէին, լուսառդեստքն սանրն ջահասգեստիցն ուրախանային, լուսեղէն ռպասաւորքն վասն լուսաւորելոցն ցընծային, և զհայրապետս զայս զովէին և ասէին:

Ձգես զալ թ ի վերայ դետոյդ այդ, ով պաշտաւնակից մեր, և զծընեալքդ յերկրէ և յախտէ, ծընցոյ ի Հոգւոյ և ի ջրոյ, զծնեալքդ ի կամաց առն և ի կամաց մարմնոյ, պատրաստեա ծնանել ի լուսն և յԱստուծոյ, ոչ յարեմէ, այլ յաւազմէ, ոչ ի մարց յորովայնէ տարահոսակք, այլ ի բնութեմէ ջրոց հասաւուք, պատրաստեա ասէ զալ թ ի պէտս դայեկաց, և դատաւարակեա, ոչ եթե մանկանց և մանկամարդաց, այլ արանց և կանանց, ոչ եթե ի պէտս սնուցանելո ի վերայ զրկաց, այլ ի պէտս ուսուցանելոյ վասն կենաց:

Ձևացոյ այսաւր երկինք զընութիւն ջրոյս, զի ծնեալքդ ի դմանէ կուշեսցին որդիք Աստուծոյ երկնաւորի, պատրաստեա զքակարանդ անբանից, յինել ծընաւդ բանաւորաց, քանդի ընդ Կեփաղոս ընտրեցար լինել որսորդս թաղական: Մնիւր ի մի յորովայնէ զանթիւ բիւրսդ, արայ զընութիւն ջրոյդ բազմածին իբր բնութիւն Հոգոյ և առաւել ևս, որ զմինն ծնաւ հասակաւ և այլ ոչ

ևս, ծնիր զորդիսդ զայդոսիկ, ուր ոչ արեացի հրապարակող լեզուն առաջին պատ-
րանառքն, և ծնեալքդ ի ջրոյ ոչ կրեացն զազականութեան պատիժն, հանգոյն
սահեղծելոյն ի հոգոյ ժառանգութեամբ դժոխոցն, քանզի ի դժաւ լաղջախեցաւ
ժախացող և ժաւաբեր դուռն վիշապին, քանզի ի քաջ հատեալ շորացաւ պատ-
րեղարուդի լեղաւ նորա, և ջրով և հոգւով սպնեուն զազանաւ արսուածն յինս
և զպատմուծան փառաց երկաւային, զորս ոչ անարգեցին ի հարսածեացն երկ-
նից, զի եկին ի ձեռն հողանծին փաղեցան դրունքն եղեմայ, և քացան դրանք
դժոխոցն, ծրնելոցդ ի ջրոյ տարածեցան դրանք արքայութեան երկնից, և
դրունք աղբնծի փշրեացին դժոխոցն, և դուռն փշրեացոյն պաշտանեաւ, և առ-
պարտելի զինաւոր, և լուսաւորիչ քանանայ, Տեառն թաղաւորի, և քանանա-
յապետի երկնաւորի, նաւաւլապէս ուրախացիր ժողովրդեամբդ ջով, քանզի
քե եղե րազմածին՝ ամուլդ, քե անեցին անթիւքդ, կորի սակաւաւքդ, քե ու-
րախացաք անմարմինքս, որ մասն կորուսելոցդ մարմնաւորացդ սրտմեալ էաք
անմարմինքս :

Քե ցնծացաւ նրստեալն ի վերայ աթոռոց քէրովճականաց : Քե եղեն
երկրպագուք երկնաւորին, երկրպագուք անդրնդայնոյն : Քե րազմապատիկ
եղեն սակաւքն, որով անեցուցանողն կարի մեծապէս պատուով ժառանգ յուրա-
խութիւն Տեառն իւրում :

Եւ արդ սպասաւորութեան ալիք թ ի մէջ ջրոցդ այդ պարեպեցն ոտք թո
ի մէջ դրախտի անդ, և որպէս սպասաւորեալ քաղմաց զընդից մարդկան ի գետ-
սըղ յայդ, այնպէս սպասաւորեալ ի քաղմաց զընդից հրեշտակաց ի ծաղկաւետ
դրախտի անդ, և որպէս յաւժարեցար ամենայն անգամաւք թովք ներելի տան-
ջանս զանազանս, այնպէս ծաղկեացն ի մէջ ծաղկապայծառ և ծաղկապարդ դ-
րախտին, յարմարաւար և զաւդուածալէն մարմին թո, պայծառանայ առաջի
նահատակարդին, թեհեղաւք և ծիրանաւք սղեցելաւք, և զլուր թո պսակաւք
ծաղկահիւսաւք, և թիկունս թո ոնիփորնաւ, իբրեք թրովքէս հրաշար թեաւք
զարդարեալ բոցապայծառ փայլամբ առաջի հրանիւ աթոռոցն, և մեծապէս
փառաւք փառաւորիս յլատուծոյ, և ի հրեշտակաց իւրոց յերկինս, որպէս և
մեծապէս տանջանաւք տանջեցար ի թաղաւորէն և ի պաշտանաւք իւրոց
յերկրի : Ուրախ լեր և բերկրեա, ով հաւատարիմ պաշտանեալ թաղաւորին
երկնաւորի :

Չայս ամենախ ի դէպ էր առիկ դասուց հրեշտակաց, յորժամ մկրտէր
զանթիւ քաղմութիւնքն, և մեծապէս փառաւք փառաւորիւր յազգաց մեծաց, և
յարանց փառաւորաց և մեծամեծաց, հզաւքաց և արեսովանաց, որպէս և փա-
ռաւորէր յարքայէն նոցանց. և որչափ և խոսապոյն էր սիրտք նոցա ի վերայ
սրբոյս այս, և աննեթելի լինէին ի վերայ նորա ի տանջելն, և ի պատժելն, ի
թաղաւորէն և ի մեծամեծաց իւրոց և ի պաշտանաւքից, այնքան ևս առաւել եղե
հնազանդութիւն նոցա, և հաւանութիւն և պատիւ և փառաւորութիւն առ երա-
նելի այրս այս : Եւ այսպիսի ճշմութեամբ փառաւորեցաւ յազգաց ամենայն :
Եւ առաւել ևս ի յունաց արքայէն, և ի քանանապետեաց քաղմաց այնոցիկ, որ
իբրեւ զարեգակունք ծագեցան առ ի լուսաւորել զայն մտաց տիեզերաց ամե-
նայն, և իբրեւ ի ջահէ միոյ և ի լապտերէ, քաղմով ջահ և զամբար լուցանել
սովորին, և նովաւ ամենեւեմ լուսաւորեցին ի տունս իւրեանց, այնպէս և
զբանս վարդապետութեան նոցա, իւրաքանչիւր ազգք և աղինք փափաղեցին
թաղմանել ի թողաւ իւրեանց, և հառել տնչային զբանք ճառից նոցա բառա-
ւոր ծիծուունք յերկեցիս Աստուծոյ :

Եւ որչափ և կենդանի լեզուաւ իւրեանց փաթացան զանթիւ քաղմու-
թիւնս ի հանապարհաց շարեաց, որ տանէր ի հուր գեհնին՝ զարժուցանել և

առաջնորդել նոցա ի ճանապարհս Կարալուքեանն երկնից, այնքան առաւելապէս և ի բանից ճառից նոցա ունկնդրողք՝ դարձան ի քանդանայ քաղաշխարհութիւն, որ և բանք բերանոց նոցա յիթեովպացիոն և իսկիւթացիոց լեղում բարբառեցաւ, մինչև ուսուցանողն թաղմաց, երկնապայծառ միտն լուսապարբ բանբրն, շառաւիղարձակ լեզուն, ճառագայթաբուլի չրթունքն, նըշխապիւռ բնորանն, խորին Ատորին երանելին Եփրեմ, ցանկացաւ գնացունցն բարբառել, և աշխու առաւելապէս լուսաւորել զդրոշմս ականջաց ունկնդրողաց, որով սրտոք լսաւդացն պայծառաւանգ առվորին. և ի ձեռն արտաքին անդամս յն ընդունելով ընդ դրունս իւրեանց դաստղնապայծառ շառաւիղս, զբանս վարդապետութեան, զներգասրնակ անդամն լուսաւորէ: Ուր այդ ամենախն կատարէին բազմաթեանց այնոցիկ փափաքումն եղև երկրպագութիւն ինեղ նշխարաց նորա, որ և տնթիւ բազմութիւնք նոցա, նշխարացն ինեղ երկրպագութեւ, և ուր բանակք մարտիրոսացն գերեզմանաւք իւրեանց պատուէին, և պարստամարք մեծադուսաւք փառաւորէին յեկեղեցիս ի կաթուղիկէ և յառաքելական, տենչային զի և գերեզմանաւ նորա զարդարէին զգլխ իւրեանց:

Այսպիսի փառաւք փառաւորեցաւ փառաւորեալ այս աշխ նահապարկութեամբն և քահանայապետութեամբն, որ և յետ այսր ամենայնի տեղեպ տեսիլ ահաւոր, որ և ամենայն ըստ մարդարէութեանն Եփրեմի կապարեցաւ, տեսանելով զահաւորն զայն, և պատմէր լսաւորացն զիջմանէ առն այն լուսապարզի և ահաւորի, որ բոմբին և որոտմամբն և ձայնիւ եռանդուն տասանելի, ի նմանութեան ձմեռնածուփ խոտովութեան ծովու, և բանայն բարձրախորան կամարացն իջեալ առն այն գլեբպարանն առաւելապէս ըրէր քան ըրբ բազմաճառագայթ զշառաւիղս արեղականն, որ երևելոյն զԳրիգորիոսն բարբառէր իշմամբ, զի նրկատելոյն ի բարձունս տեսանէր, գտեսիլն ահաւոր, և նրկատելոյն տեսանէր, զի թնութիւնն այն որով ծածկիւր երկիր, զբաւսանիւր ի բարձրութիւն հաստատութեանցն, և ի պատառումն կերպարանիւր, ի նմանութիւն վրտակաց կարկաշտհոսաց, լեռնանային և ծուփ առ ծուփ բազմանուսին, որ և նուաղէր բազմատես բերական, ի չափել զաւրինակն, և անտի լոջս երկնարձակ զի հասանէր յերկիր, և ընդ լուսոյն գոնդ(ը) լուսեղէնք հոլովեալք մարդկեղէն աւրինակաւ, թխաւք երկու սգեցեալք, և թնքն հուր փայլատակէին:

Չայն տեսանէր և ըստ նմանութեան անըմբռնելի և առանց աւրինակի տարերց, փոշակերպիւ, անաստգած և նմանութիւն մանրուսի փոշոյ, լուսաճաճանչ ի շառաւեղից արեպական ոստեալք անաղաւտ ընութեամբ, ընդ լուսաբանս բնակարանի տանն կերպարանի, որ եռացեալ մանրունս ի թիւս ոչ արկանի համարաւք, այնպէս լինէին եռացեալ բազմութիւնքն լուսեղէնք, և այնպէս տեսիլ ի նմանութիւն մարդոյ ահեղատեսակք յոթ բարձրադոյն, բարձեալ աջոյ ձեռամբ իւրով ուռն մի ոսկի մեծ, և ինքն ստորաթոխ լինէր, խոյնայնով ի բարձանց գայր՝ ի նմանութիւն արազաթոխ ջալթի արծիու, և եկն ճհաս յեռնս երկրի, և զլայնապիւռ թանձրութիւն ի վերայ անդընդոց հաստատութեան բաշխեալ, և ընդ բաշխեալն նորա աներեղիմական բարբառս Հինչեցին, խաւարախումբ և մթաւքաւեալք ծրնունդ խորն սանդարամտակաւնացն, և ըստ չափոյ բաւելոյ լուսաւոր անդամոյն սպասաւորութեան, բարձր և խոհարհըն դաշտացեալ լինէին տափարակ, և այնպէս տեսանէր քաղարանի արքայական լայնացեալ խարխիս Խակեղէն պայծառաւորն և հաստատագոյն, հանգոյն հոգակուտի բլրի մեծագոնոյ, և սիւն հրեղէն հաստատեալ ի վերայ խարխիսի, այն որ բերէր գլեբպարանն անաւրինակ ցամենախն սպասաւորութեանցն աչաց:

Եւ ի վերայ նորա բոլորածն հաստոր ամպոյ, և աւրինակ նշանին լոյսն քառածն եւալ երևէր, ընդ այնմ իսկ և ուրիշակաւ այնք տեսանէր խարխիս երեք

յիւրաքանչիւր տեղւոյն, ուր Գալիանէ զնահատակութիւնն կոտորեաց՝ զպատարապէս որ անձամբ իւրով մտտուցաւ, և սրբուհին Հոնիքիմէ հանդերձ աջ լոյք նահատակեցաւ, և միւսն ուր լինէր հընձանն հիմնացեալ, և խաբարեալ ախոքիկ ծիրանակերպեալք փայլէին, և դուռով արեան արշալոյսոսին, և սինք որ ի վերայ նոցա տնայաձև թանձրանայր, և դուռք սեռնցն ճառագայթ հրդ ծագէին, և ի վերայ զլոյս աննցն սեռակննձեութիւն ճշմարիտ խաչի, աւրինակաւ տերունական խաչի, որ թէ զլոյս քառաթեւեայ:

Եւ իբրեւ երեքնան սինքն առաջնովն շորորդեցաւ, տեսեալ ի վերայ նոցա կամարոձեւալ զմտեթակալ ամպաշէն, խորանո աթոռաձեւերոտ, և դրաստ վկայցն, որ անդ կատարեալ էին, որովն աշտրիկ տեսեալ զի ջահատողստիւք լինէին զարդարեալք լուսապայծառ կերպարանաւք, և ի կատար ձևակերտութեան այն՝ տեսանէր փահ սքանչելի և հիաստլի յոյժ. և ի վերայ ասթոռոց այն հարստատեալ հեղէն փաշն տերունական, զորով փոխելով պատէր լոյսն համափիլոսոս խառնեալ, և համափայլեալ խաչն ընդ ճառագայթս խաչին, և Թեոփեանալ լոյսն թոցակաթ լինէր, և ծագմամբ ճառագայթիւր ներքոյ սրեանցն խորսխաց: Եւ աս հրակերպութիւն և լուսաձեւութիւն երեքն, անպատահելի աւրինակաւ անտի յորդագնաց կարկաջանոս անն աղբրեաց բոխէին, և ծաւալութեամբն իկից գերեւս զաշտին, և ճովացաւ ջուր աղբրեւս այն, և կատարաւարանայր երկնակերպեալ աւրինակաւ, որ իբրեւ քնդ հախլի թանձրութիւն ջուրցն յառաւորութեամբն երեւցաւ, և երես զաշտին, և սեղանա տեսեալ բազմութեան, և սինք մի հաստատեալ ասդ սեղանոյն, և խաչ ի վերայ սեանն պայծառացեալ, և երեւոնս աստեղաց ճառագայթազարդեալք, և ջուրն անթիւ աշտեաց, և տեսեալ զի միտեալ ի ջուրն անցանէին յաշտ կուտ յայն կոյս, և փետուր աշտեացն ի կիցն ասեր փոխեցան, և աշտին զպատեհի աւղեաց վերաբերին, և ուսազուրկութիւն անեկացն աւրինակի՝ ի ապիտակութիւն զաշտեղմանցն բերէին գհատեցն կերպարանս, և լուսակեղեմալք ջահափայլք լինէին, մինչև ճառագայթք լուսոյ ծագէին ի նոցանէն: Եւ իսկոյն վաղվաղակի ծընունդք եղեն նոցա, և անունն ծնողոց բազմանային, մինչև լցաւ վարան այն ծննդեամբ նոցա, և լուսափետուրք երեւէին, և գառնք նոր էին ծնունդք բուսակիցն աւղոցն, և յանկարծակի ի պայծառափետուր գառնոցն աշտիկ, անկեալք ի ջուրն յայն կոյս երեւալք, թիափետուրք երեւցան, և ճշմարիտ զայլք կերպարանեցան, և անկեալ ի մէջ հատեցն շրջէին, և ըստ սոփորութեան գալուց ծանալախալ արեանարբուք լինէին, և իսկոյն վաղվաղակի թևս իբրեւ արծուր ստանային ջուրք աւղիցն թռուցեալ սլանային, և վերաթռիչ լինէին խառնելով ընդ լուսազարդ երկիւնեան թոցաշար թևաբաւղից լուսեղէն դասս, և հուրն հեղեալ գետահոսեալ տարաւ զգայսն, և իբրեւ հիանալի էր տեսին և տեսողն լինէր հիացեալ:

Ո՛վ սքանչեւեայն, որպէս զՆանիէլեանն լինէին ամենայն փրկապն գլխովոյն, փիլապոն առեծուցն, պարտ էր և աստ տեսեամբ վայելեալ: Եւ որպէս նմա մեկնեցաւ, այնպէս և սմա զարմանալի իրաւք. զի ալքն այն որ, լուսաշնունն նմա երեւեալ, խառնեցաւ ցնաւ և ասէ. տեսաւ նոյնեամբ տեսիլդ այդ ցոլեցաւ քեզ, զի իմացեալ ճշմարտութեամբ զեյն տեսչեանդ, այս է ասէ տեսիլդ զոր տեսեր:

Բացումն զրանց երկնից՝ զբացումն մարգարտութեանն Քրիստոսի աւրինակ է, և ձայն բարբառոյ որոտման՝ զիմանելոյ օգործութեան և զթեթեանն նորայ, իսկ ջուրքն, որ ի վերայ նորա բացան, այս խի է. զի որք յաւատարման վերանալ յայտ աշխարհէ յերկինս, արեւն նոցա ոչ լինիցի: Զի նահատակաւ այսոքիկ, որք աստ նահատակեցան, զճանապարհս իւրեանց ի հիւսիսա-

կան կողմանց գործեցին, ուստի առիթուն է գընթում էին սիրոյն աստուծոյ ցանկէ յաւատարեւոյն վերաթող լինել ի բարձրութիւնս երկնից, և վաղվազակի լինիցին խափանիչք: զի ըստ առաջին վկային զգործնս երկնից բացեալ ինքեանց, ճանապարհաւ ալիմ, և բացան նոցա գրգռեց երկնից, և ելանելովն իւրեանց, ալոց ճանապարհ Հրեհնեցին, Եւ ըստ որ եկից զվարդաւ ալո, ըստաշար բանք տեստարանին է, որ ի քարոգութենէ քումմէ լընտ զկողմն Հիւսիսոյ, ուստի ունկնարցութիւնս առիթոր լինել զունկնարդաց բանից աստուածականաց, և հոցիք լուստագետից երկթեկանց ըստաշարից փափաքեցին իջանել, զի հոստաւեսցին ի ծագկապայտաւ մանուշակեղայ ծիրանացելոյ արլանագունի, և նաւ լին զունով կարմրամեակ վարդագունաւ:

Նայեալ ասէ աշուհեան և իմացիր, զի յալմահտէ ընդ բնակութիւն երկրաւորաց խառնելոց են անթիւ բազմութիւնք հրեշտակաց, իսկ ալոս ալոս որ զառաջին լուսոյն ունի, ահաւոր երեւցաւ զեզ և սքանչելի, որ զանի զուտեն ոսկեղէն ի ձեռնի իւրում, և հարեալ բաղխեաց զբնակիչն սոնդարամետակտաւաց: Այն իսկ տեսչութիւն միայն Աստուծոյ է, որ նայի յերկիր և տալ զողջալ նմա, և մերձի ի յերկնս և ծիւսեցին: Աւրինակաւ ուղեահարութեանս արհեստիւ մեծագունաւ հարեալ մանրեցել, և հարթեցել դոստաւարդեաց երկրաթացեալ, և կորգեցել յերեսաց երկրէ զմոլորութեանս արմատն:

Իսկ ալն զի հնչեաց երկիր հնչումն զձայն հաւանութեան, և զհնազանդութեան Գառալութեան բարբառեաց: Եւ սիւն և խարխիսն ոսկի, որ ունէր սիւնն հրեղէն զամպոյ կերպի բոլորամեութիւն զնոյ, և քառաձուլութիւն նշանին ի վերայ նորա, զհաստատութիւն հաւատոյ անասանելի նշանակէ խորիսն ոսկեղէն, և զկաթողիկէ և զառաքելական եկեղեցի սիւնն հրեղէն, սւր և հաւաքին ժողովուրդս ի միաբանութիւն հաւատոց:

Իսկ զընդամեութիւն ամպոյն բոլորեալ զբոլորութեան սիրտս արդարոցն ցուցանէր, զոր և ընդունելոց է բոլորեալ ընթանալով թուեցեալ պալատեամբ անաւոր տէրունական ելանելով ընդառաջ նորա: Իսկ խաչն որ ի վերայ նորա ճաւարիտ զաւհանալապետութիւնն հաստատէ ի մէջ ժողովրդեան ըն յարիւնակ Քի. հաստատեցի ի կերպարան անաւոր մարմնացելոյ ի պատկեր մարդոյ, և զաւհանալապետութեանն իւրոյ աստուածութեանն Աստուածորդին և Աստուածն, զի և տեղին ալն լինիցի տաճար Աստուծոյ և առն աղաթից և աթոռ քահանալապետութեան:

Եւ խարխիւքն կարմրապունեալք սակս տանջանաց եկելոցն ի վկայութիւն, և ի նեղութիւն տանջանաց, հոսմամբ արեան, և համբրութեամբ արհամարհեցին զմահս իւրեանց, զոր և արարին խարխիս ճամարտութեան հաւատոց հաստատութիւն արեամբ իւրեանց: Եւ սիւնք ամպեղէնք, վասն զի ունի բնութիւն ամպոյ զթեթևութիւն, և թեթևութեամբն արադաթիւ լինիցի արադութեան թեւս ստանալ յերկնս վերանալով: Եւ զնշանմանեալն բոլորապիտոյ մպանան հրեղէն զի նոցա բնակութիւնն ի հուր քահանութեան աստուածութեան նորա լինիցին:

Եւ խաչն վերաբերէ զտանջանսն աշոցիկ որ վասն խաչեցելոյն վկայեցին, և փոխանակ նորա զանձինս ի մահ մատնեցին, և Քս. կենդանի է յամենայն անգամս և ի զաւղուածս ոսկերաց նոցա: Եւ ընթանալով ամենեցուն զնոցա կենդանութիւնն ցուցանէր, որպէս զի հղեն Տեառն իւրեանց չարչարակից, կամեցաւ և նա մարդասիրութեամբ իւրով դոստաւարտեալ փառաց զաւրութեան իւրոյ հաղորդս: Եւ խաչն առաջին, որ նմա երեւցաւ, ալն իսկ բարձեալ ունի զքահանալապետութեան պատիւն, որով պարծի յաղթութիւն խաչին նորա: Իսկ ալ երեքինն քսեղի վկայութեանն ցուցանէ, որ վասն խաչի նորա զչարչարանս

կան կողմանց գործեցին, ուստի առիթուն էր զնգում էին սիրոյն աստուծոյ ցանկէ յաւատարեւոյն վերաթող լինել ի բարձրութիւնս երկնից, և վաղվազակի լինիցին խափանիչք։ զի ըստ առաջին վկային զգործնս երկնից բացեալ ինքեանց, ձանապարհաւ ալիմ, և բացան նոցա գրգռեց երկնից, և ելանելովն իւրեանց, ալոյց ճանապարհ Հրեհնեցին, Եւ ըստ որ եկից զվարդաւ ալոյ, ըստաշար բանք տեստարանին է, որ ի քարոգութենէ քումմէ լընտ զկողմն Հիւսիսոյ, ուստի ունկնարեցութիւնս առիթոր լինել զունկնորոգաց բանից աստուածականաց, և հոյճք լուսապեհատից երկթեկանց ըստաշարից փափաքեցին իջանել, զի հոռուսեացին ի ծագկապալստու մանուշակեղայ ծիրանացելոյ արլանադունի, և նաւ լին զունով կարմրամեակ վարդապունտաւ։

Նայեալ ասէ աշուհեան և իմացիր, զի յալմահատէ ընդ բնակութիւն երկրաւորաց խառնելոց են անթիւ բազմութիւնք հրեշտակաց, իսկ ալոս ալոս որ զառաջին լուսոյն ունի, ահաւոր երեւցաւ զեզ և պառնչելի, որ զանի զուտնն ոսկեղէն ի ձեռնի իւրում, և հարեալ բաղխեաց զբնակիչն սոնդաբամետուտաւ։ Այն իսկ տեսչութիւն միայն Աստուծոյ է, որ նայի յերկիր և տալ զողջալ նմա, և մերձի ի յերկնս և ծիւսեցին։ Աւրինակաւ ուղեահարութեանս արհեստ իւրով մեծագունաւ հարեալ մանրեցել, և հարթեցել դոռոտս պնդեղաց երկաթացեալ, և կորգեցել յերեսաց երկրէ զմոլորութեանս արմատն։

Իսկ այն զի հնչեաց երկիր հնչումն զձայն հաւանութեան, և վնաս զանդութեան Գառալութեան բարբառեաց։ Եւ սիւն և խարխիսն ոսկի, որ ունէր սիւնն հրեղէն զամպոյ կերպի բոլորամեութիւն զնոյ, և քառաձուլութիւն նշանին ի վերայ նորա, զհաստատութիւն հաւատոյ անասանելի նշանակէ խորիսն ոսկեղէն, և զկաթողիկէ և զառաքելական եկեղեցի սիւնն հրեղէն, սւր և հաւաքին ժողովուրդս ի միաբանութիւն հաւատոց։

Իսկ զընդամեութիւն ամպոյն բոլորեալ զբոլորութեան սիրտս արդարոցն ցուցանէր, զոր և ընդունելոց է բոլորեալ ընթանալով թուղեալ պալատեամբ անաւոր տէրունական ելանելով ընդառաջ նորա։ Իսկ խաչն որ ի վերայ նորա ճամարիտ զաւհանալապետութիւնն հաստատէ ի մէջ ժողովորդեան ընդ յարիսի Գի. հաստատեցի ի կերպարան անաւոր մարմնացելոյ ի պատկեր մարդոյ, և զաւհանալապետութեանն իւրոյ աստուածութեանն Աստուածորդին և Աստուածն, զի և տեղին այն լինիցի տաճար Աստուծոյ և առն աղաթից և աթոռ քահանալապետութեան։

Եւ խարխիսն կարմրապունեալք սակս տանջանաց եկելոցն ի վկայութիւն, և ի նեղութիւն տանջանաց, հոսմամբ արեան, և համբրութեամբ արհամարհեցին զմահս իւրեանց, զոր և արարին խարխիս ճամարտութեան հաւատոց հաստատութիւն արեամբ իւրեանց։ Եւ սիւնք ամպեղէնք, վասն զի ունի բնութիւն ամպոյ զթեթևութիւն, և թեթևութեամբն արադաթիւ լինիցի արադութեան թեւս ստանալ յերկնս վերանալով։ Եւ զնշանմանեալն բոլորապնդս մպանեան հրեղէն զի նոցա բնակութիւնն ի հուր էականութեան աստուածութեան նորա լինիցին։

Եւ խաչն վերաբերէ զտանջանսն աշոցիկ որ վասն խաչեցելոյն վկայեցին, և փոխանակ նորա զանձինս ի մահ մատնեցին, և Քս. կենդանի է յամենայն անգամս և ի զաւղուածս ոսկերաց նոցա։ Եւ ընթանալով ամենեցուն զնոցա կենդանութիւնն ցուցանէր, որպէս զի հղեն Տեառն իւրեանց չարչարակից, կամեցաւ և նա մարդասիրութեամբ իւրով դոռոտս առնել փառաց զաւրութեան իւրոյ հաղորդս։ Եւ խաչն առաջին, որ նմա երեւցաւ, այն իսկ բարձեալ ունի զքահանալապետութեան պատիւն, որով պարծի յաղթութիւն խաչին նորա։ Իսկ այլ երեքինն քսեղի վկայութեանն ցուցանէ, որ վասն խաչի նորա զչարչարանս

սքն խաչին կրեցին, քանզի ուր հանդերձեալ էին պատկաւքն պայծառանալ հեղ-
մամբ արեանն իւրեանց՝ առդ. և հանգըստարան նոցա շինեցցի, և վկայարանո
սսկերաց նոցա :

Իսկ պատկեր քարձրութեան սեանն առաջին գրարձրութիւն զկաթու-
ղիկէ և դառաքեկական եկեղեցւոյ վերաբերէ աւրինակ, զի բարձր է քան զամե-
նայն քարձրութիւն սրբոց, և կամարքն, որ ի սեանցն յանդիման միմեանց կա-
պէին, զհասարարութիւն կաթողիկէ առաքելական եկեղեցեաց ցուցանէ, և խո-
րանն, որ ի վերայ զաւրինակ վերին քաղաքին կերպարանէ, և է ժողովարան
և դեմա, միաքանութեանն, զի մաս վասն Քրի. առժամայն պաւլոսեանկան կեն-
դանութեանն ունիցի ժառանգ, և փառաւորեցցին ի փառս փառաց որդւոյն
միաժոնի որ փառաւորեցաւ ի հաւրէ :

Եւ ի վերայ կատարի շինուածոյն, զոր և տեսանէր, այն իսկ ճշմարիտ
անասանելի անհղական աթոռն հաստատութեան ամենադաւր բնութեան նո-
րա աստուածութեանն և ինքնական, և էական բարձրութեանն, որ բարձրանայ
ի վերայ հիման եկեղեցեաց, և լոյսն որ փարէր զխաչին՝ հոգին է էակից, որ
և հաւասարութեամբն փառակից է աստուածութեանն, նովաւ Երրորդութիւն
և մի Աստուածութիւն երկրորդադիւր և մի բնութիւն, և այն իսկ որ ծագեցաւ
լոյսն ի չորեցունց սեանցն, և բոլիցոյց դառաւստաբողիս սղբիւրն, զյորդահոս
և զկարկալազնաց զկաթողիկէ եկեղեցոյն, որ ի մէջ իոստոյմանոցայն, զչնորհ
հոգւոյն ի մէջ վկայեցելոցն, և ի մէջ քահանայականութեանն բոլիցոցի աւա-
ղան մկրտութեան առ ի մաքրել սրբելով զաղտս հոգւոց և մաքրեցցի :

Եւ ընդմէ բազմութեամբն զվայրսն զայն՝ այն իսկ է զի ի ձեռն մկր-
տութեան յազնեղութենէ կապաղաւորութեանն սրբեցցին, և լինիցի փրկութիւն
ամենեցուն, և բազմանան հաւաք ուղիղ, և լնուն զաշխարհդ զայդ : Եւ զի երկ-
նադոյն բերէր զկերպարանն, և կապուտականայր դաշտն ամենայն, այդ լիցի
առէ ձեզ զկրտութիւն, զի որք կամեցին ազգափառութեամբ մարի, և առնել
զկամս Աստուծոյ, և իմամբ բանին և լինել մարմին, ի նա ապաւինեալքն իջ-
մամբ նորա, երկել իրեւ երկինք լինիցին, և որպէս երկնաւորն առնալ զկեր-
պարանս երկրաւորի՝ և զերկրաւորն հաւասարեաց աստուածութեան իւրոյ, նա
իսկ և երկրաւորք իրել երկնաւորք փառաւորեցցին : Եւ սեղանքն ճշմարիտ նա-
բա լինիցին, որ զվարդապետութիւն քաւութեան անխափան բաշխեն ազգի
մարդկան, և հրեզնէ մասն այնորիկ երեւցան, զի մեծապէս փառաւոր յուսա-
պայծառ եղիցի պաշտաւն հոգւոյն, և որ սիւն մի լինէր առ սեղանն, առն է
աղաւթից քահանայութեանն :

Իսկ նշան խաչին, որ ի վերայ նորա, զմեծապէս ազաւոր անուն խաչե-
ցն լոյն աւրինակէ, զի փառաւորեալ է քաւաթեւ երեւոյնս աւրինակաւ. ընդ չոր-
բորդ կողմանս աշխարհի :

Իսկ աւրինակ աստեղաց երեւոյց, այսինքն է զի չափով աստեղաց բազ-
մասցին պաշտաւնք որբութեանցն : Իսկ քաղմութիւն այժից խաչանցն, որք ան-
ցանէին ընդ ջրուն և քայն անութեանն ի սպիտակութիւն աւղից փոխեցան, և
ջահասպտակալիւն փայլէին, այսինքն է զի աջ աստուածութեանն ի ձեռն չը-
նորհակի բաւանդութեանն հասանելոց է, որ ի ձեռն նորա հոսեցի բնութիւն
ջուրց՝ առ ի բոլիսունս լուսաւոր մկրտութեանն, որով լինիցի քաւութիւն և սրբ-
ութիւն քաղմ մարմնանց :

Եւ այն իսկ որ լուսակողն երեւէին սար նոցա, և փայլէր պայծառացեալ
այսինքն է, զի ամենայն որ հաւատացեալք են, և որք ի թրաւհաւատից պայցեն
ի մկրտութիւն ճշմարիտ զլոյս ազնուն : Եւ այն իսկ զի հաւաք ծնողեամբ իւր-
եանց լցին զվայրսն, այսինքն է զի ի ձեռն քաղմութեանն անհեցին բազմոս-

թիւնք ըստ առաքելական շնորհացի, և նոր ծննդեամբ ծնանին, և այն իսկ նորոգութիւն է զոր բազմացուցանէ շնորհք մկրտութեանն: Եւ զի կէսքն անկեալ էլանէին յայն կոյս ջրոյն, զիտացիր զի ի յետին ժամանակին, յետ միտարանութեամբ հաւատարմոյն ի Քրիստոս, և փոխելոյն ի մաշակաւ մոլորութենէ կռապաշտութեանն, ժմանք մոլորելոց են ի կռապաշտութիւն, և զաւանդութիւն՝ ուղիղ հաւատոյն՝ յետ ընկեացեն զորութիւն աստուածութեանն, և թողցեն զուխտ սրբութեանն, և ի դառնացն լինելոց են զայլք, և կոտորեն զգառնան, աշխնքն է զայնոսիկ, որ անփոփոփելի մնացին ի հաւատս ճշմարտութեան:

Եւ որ յուխտէ քահանայիցն ելին զայլք, և արեամբ դառանցն լցցին քերանք նոցա, և ժանիք փողոտողաց թանձրանաւ արեամբ փողոտելոցն, աշխնքն է ուխտին քահանայութեան, և խոսովութիւն ժողովրդոցն: Իսկ որ համբերէ ի մանկանց ժողովրդեանն, կամ ի քահանայիցն, աւրինակաւ դառանցն զարդարեացին թեալք լուսազարդիւք այնմ աւրինակաւ զոր տեսեր, և վերաթոշ լինելովն վերանան յարբոյսական հանդիստն երկնից ի փառկութիւն զբախտին:

Իսկ որ աւրինակաւ զայլոցն զյաւիրչասակութեան գործն զործեսցեն, իրր կապարաւ ծանրացեալք ոստնոյ ի տեղւոյն բարձրութեան ուրիշ աւրինակաւ այնմ իջեալ անկանիցին ի խորխորատս տարտարոտաց զժողոցն:

Եւ բանիւք այսոքիկ խաւսելով մարացուցանէր զամբացեալ պարիսպն անխախտելի, և ասէր. զգոյշ լին, զի զործ ի ձեռն եկեալ հասեալ է քեզ, և պայծառացիր զի քեզ բարութիւնք զիւրաւ են լինելոց, և զու ընդ անվեհեր մըշական՝ ճշմարտութեան ժառանգն՝ վայելեսցեն զհատուցումն վարձուց քոց, աշխնքն է ընդ առաքեալսն զանապական պարկէսն Քրիստոս: Արդ զգոյշ լին աւանդիտ, և հաւատիցդ մատանացելոցդ, որ հաւատացաւ քեզ ի Տեստնէ Յիսուսէ Քրիստոսէ:

Ով շնորհացն աշխկիսի որ պարգեւեցաւ նմա, որ այսու և առաւելապէս ընտրեցաւ, ընդ մարգարէսն փառաւորեցաւ տեսիւմբ, ընդ առաքեալսն՝ վասն ժողովրդեանն տանջելովն և համբերելովն, և սիրելովն զնոսա, որպէս և ասէր. Եւ ես մարդ եմ իբրեւ զձեզ, և մարմին եմ զզեցեալ որպէս զձեզ, բայց զուք ծանկերուք զարեւրին, որ արար զերկինս և զերկիր, զարեւոյկն և զլուսին, զծով և զցամաք, և նա բռնկեցէ զձեզ:

Եւ ընդ մարտիրոսքն համբերութեամբն ի տանջանս զանազանս, կախաղանացն, գելարանացն, և քերանացն, կոշկոճանացն և տատակացն, փշելոյ ուռուցմանցն, և ի վիրապի բանտարկութեանն, և ի մէջ աւճիցն և վիշապացն բնակութեանն, և ընդ հայրապետն ուսուցանելովն իւրով, և ասելովն ցանբաւ ժողովրդոցն՝ ծանկերուք զՏէր և նմա երկիր պաղէք, և նա մարդասէր է: Եւ յորժամ զայցեն առ նա, զանարկողն իւր յորժամ արացեն զկամս նորա, աշխպէս սիրեացէ զնոսա իբրեւ զամենայն երկրպագուս աստուածութեան իւրոյ ի ծննդենէ իւրեանց, որով անեցոյց զբազմութիւնսն անչափ և անթիւ:

Եւ արդ յորժամ յանցաւորս աշխպէս փառաւորեցաւ, որ կապեաց զանկապելի մահադեղան վիշապարուղի թոյնս, որ նմանութեամբ բորբոքմամբ հրոյ ի ժանեաց նոցա վառէին մահարերութեան բղղումն, և ի ձեռն նորա և վասն նորա փոխաձեւութիւն լինէին մարմնոյ բանաւորի՝ յանբանի անոսնոյ, և երկոտ(աս)անի աստուածադործ պատկերիս զալ ի ճշմարիտ յանդայ բնութիւն, և ի յանմտութիւն անարգակելից զառնալ, և զարձեալ յանարկ կերպարանէ անտի, առաջին պատկերաւն վայելչանայր, ախտացեալն ի կեանն յայն, զոր ինչ լինէլ նմա փոխելովն ի կենցաղոյս այս անսմանացաւ, և մընացական կենդանութիւնն յանմաւ:

Եւ արդ իբրեւ թէ ակնհայտես լինել ինձ զոր ինչ առդ կտտորիւք, գիտեմ զի այնպէս լինէր՝ յորժամ լուսապաճոյճ ե պայծառապարդ հոգին լուսաւորիչ նորա թռուցեալ երթալ թեաքողելովքն առաջի ահաւոր աթոռոյն Աստուծոյ երկրպագութեամբ, ընդ առաջ ելանէին առնալն դասք մարգարէիցն, հարանց հայրապետաց, քահանայից, նահատակաց ե պարելով տանէին մինչեւ ի դասս առաքելոցն, փութային մարդարէքն ե առէին. Եկ պայծառացիր ընդ դասս մեր, որ տեսեամք ընդ դասս տեսանողաց համարեցար, ե փառաւորացար առաւել ճշմարտութեամբ ե փառաւք ե շնորհաւք ե հոգեկիր պարդեալք, որպէս մեք աւրինաւքն, ե պայծառացիր առաւել լուսով ի փառս մեր ե ի պարծառութիւնս, որպէս մտեր ե վաստակս մեր, ե զցանկութիւն սրտից մերոց աչաւք թոյովք վայելեցեր:

Եկ ե քե պայծառացոյ զմեզ տեսեամք իբրեւ զմեզ. Աստ է Մովսէս ե Ահարոն, մարգարէութեան աւրինակաւ պայծառացիր ընդ Մովսէսի, ե քահանայութեան սլատուովն պայծառացոյ վահարովն: Աստ է այրն ցանկալի ե մանկունքն աբրահամեան. զիբազան զալելլացիր ընդ Հնոցամասւ մանկունքն կապելով զերբանա վիշապացն, ե եղծանելով զթիւնս նոցա, պայծառացիր ընդ Դանիէլի: Եւ փոխելովն կերպարանացն զմարդն առեալ անտեսեալք, ե զանասունն մարդակերպ: Դարձեալ տեսրլեամքն փայլատակեա ընդ Ելիկիւնի, ե պարեա ի պարունակս մեր: Եւ գունդք մարտիրոսացն աղումք առեալ ընդ առաջ նորա առէին. Ե՛ր ի դասս թ որ ճրդեցար առաւելուպէս ճգնութեամբ, սստ է առաջին արմատն մարտիրոսաբեր, ե Հիւսեալ պսակն ինքնահիւս. պլուսակնունն Ստեփաննոս, որ ինքեամք ինքն պսակեցաւ ե եղաւ ի դուռն թ: Եւ արդ եթե մարգարէքն զընդ տեսլեամքն նանաչեցին, մեք զիս՝ ոչ ճանաչեմք զքեզ. զի դաս ջահասգեստեալ ընդիտորոնաւ, յարինալ թեաքողից պաշտաւնալից, ե կարով ի սպասաւորութիւնս առաջի սեղանոյն Աստուածունակ, որպէս ե նոքա առաջի աթոռոյն: Եկ ե լից զդասս մեր քահանայութեամբ, զհոյս քահանայից, ե հայրապետութեամբ զժողոս հայրապետաց, ե զարդարեա զպունդս մեր պայծառացեալ վալստեամք թ:

Իսկ իբրեւ տեսին զսա խումբք առաքելոցն ակնարկելով առէին. տեսաք դեռ, ոյ ըղբանուն երջանիկդ Գրիգորիս, զի լցեր զդասս մարգարէիցն, ըղվկայիցն, զքահանայիցն, ե զհայրապետացն, ե մեք զի իբրեւ մերովս ճրդեցար, ե կրանիւք մերովք վարեցար, զքեզ դասաւորեալ ընդ մեզ ընդունեալք: Քանզի բաւանդակ աշխարհ մի յարարածոց բոլորեցեր, որ գալովն մշակացս ե վաստակելովն զկողորացեալ անդս բանաւորս քառաձե մաճոյն, ե կողորաց իտփաւն մնաց կորդացեալ, հաւասար վիճակաց մերոց իւրաքանչիւրոց, ե հաւասար մեր զբրտունս կրկեցեր, մինչեւ զպատճառ կատարման մեր, նախ քան ըղկատարելն թ կրեցեր, ե հեղմամք արեամք թով արբուցեր զտեղին դան, ուք հանդերձեալ էլի լինել մաճեալ, զի այնիւ զիւրաւ հատանէիր զպիւսն ուք պիտոյ էր արկանել զսերմանն, ուստի արդիւնացան հասկք արտաբէիցն, ե լըցան անդք սպիտակութեամբ որայիցն, յորժամ տեսին զմակդ կենդանացեալ ի սլատճառէ մահու:

Եւ արդ սցեստիւ մարտիրոսական, քահանայական ե մարգարէական տեսլեամք, ե հայրապետական փառաւորութեամբ, ե արիւնանրկ ծիրանեալք, ե վարդակերպ կարճագոյն սրտա՛ւ լաւաւ զարդարեալ ես, ե քահանաւոր պայծառութեամբ ճեմեալ դաս, ե ջուշառգեալեալ հրէշտակակերպ քահանայապետական սգեստիւ պայծառացիք, ե առաքելական վերաբերեալ, զի իրանգալաթ եղաք ի քեզ. Ուրախացիր ե դու ընդ աւրաթութիւնս մեր, որպէս ե մեք

ընդ թոռախոթիւնդ, և արդ ուրախ լեր և բերկրեալ, դի վարձք թոռազուհի
են յերկինս :

Իսկ մեք զինչ կարացուք զնա դովութեամբ մեծաբել, որ աւրինակք
երանելոյս այսպիսի վերաբերի : Ի յունաց զպատուեալն, ի հռոմայեցոց զմե-
ծաբաւն, ի Հայաստանեաց Մեծաց զերկրպագեալն :

Ասեմք և մեք զնա արք ցանկալի, զի ցանկալի եղև ամենեցունց ի ձեռն
բաղում և դժուարակիր տանջանաց իւրոց : Եւ աստք բարի արմատոյս այս, մով-
սէսական շնորհաւքն պայծառացան, ոչ եթե աստուածատեսութեամբն քողատու
քողեալ, այլ աստուածապիծ գրովն վայելեալ, ոչ եթէ գտանէր ժողովուրդն
յոսկի ձուլեալ դուրս խոտակերին, այլ գտախտակս սրտից բացեալ առ ի յըն-
դունել դաստուածապարգև գիրսն, որով բարբառն իւրեանց բոլորիւր, և այնիւ
զբանս լուսաշար, գոր քերթեալ ի յունական բարբառոյն թարգմանէին, և ընդ
դրունս լսելեաց արկանէին այնոցիկ, որք աշուք պայծառաստիւն ի լուսաշար
աստեղանկերպ մատենից անտի :

Ասացից զսա կրկին կեփաս՝ քակելով զհիմունս մեհենից և գտածարս
զբաւշից, և հարտատեալ դիտարիսիս եկեղեցեաց աստուածային տեսլեանն հը-
րամանաւ :

Ասացից և կրկին Պաղոս, զի չըլելով ընդ աշխարհս Հայաստանեաց,
նեբեաց չարչարանաց, և դանաղան տանջանաց, մինչև զբաւանդակ աշխարհ մի
ի մոլեգնութենէ կռապաշտութեան՝ դարձոց ի լուսաւորութիւն աստուած-
պաշտութեան :

Եւ արդ որպէս զանազան առաքինութեամբ զարգարեալ է, այնպէս և
զանազան պսակաւք պայծառացեալ : Պաւարելոցն կռապաշտութեան, սիւն լու-
սեղէն առաջնորդն, ռառուցելոցն հիւսիւսայլն հողման՝ հարաւային ջերմամ-
բն ջեռուցանողն, իջելոցն ի խորս խաւարային կապարակիր բեւամբք, զգե-
ցուցանող թեւ վերաթիռչ լինելով յերկինս անթիւ բիւրուցն առաջնորդու-
թեամբ : Ընդ անթիւ բանակս հրեշտակաց դասաւորեալ յաշխտակութեամբ ի
ձեռաց անեցուցանողին զմախակողմանն, փոխափետուր գործելով զսեւակի-
գրն ջուլսն, ի ջահակիզն աւգեսայ կերպարանս, որով աշխողմանքն բազմանա-
յին յամալթ արարողին անդընդային բնակողին :

Եւ պայծառացեալ երեսուքն առաջի երկնաբնակ արքային, անասա-
նելի վէմն յուռնահարութեան նախանձողին մնալ անբեկանելի : Անդամանդեա
խարիսին փչող ստոծացեալ ուռնացն ուժգնահարա(ն)ցն. մարմնաւոր վանո-
ղրն անմարմնոց, որով բազումք վանէին վահանն ամրագոյն. մանրոց աղեղան-
ցըն հզօւրաց, զբանն աստուածահիւս. փչող շնտիցն միսեալ չարին, և ամե-
նայն սպառազինաւք Այ. սպառազինեալ, և թաղթող ամենայն մեքենայիցն իշ-
խանութեանցն և պետութեանցն, և աշխարհակալութեան խաւարին այսոյն
պղծոյն : Եւ արդ եթե հրացեալ եմ յոյժ փափագանաւք, և երանէի զանձն իմ
լինելով ակնաստես առնն այնպիսոյ երկցս երանելոյ և լուսաւորչի :

Որպիսի երանութեամբ երանեցից զայնոսիկ, որք հաւատովք տեսին
զայնոսիկ, որ աստուածային կերպարանաւն, աստուածաստեղծ պատկերաւն
փառաւորիւր, որով լուսաւորեցան մոլորեալքն ի խաւարի, որոյ և թագազար-
դըն հաւանեցաւ, և երկրպագելին յանթիւ բիւրաւորաց, թագիւն այն լինէր
երկրպագու անարգելոյն յիւրմէ, հանդերձ երկրպագեցելովքն իւրովք, մե-
ծամեծաւք իշխանաւք, կուռեակաւք, պետաւք և ամենայն զինուորաւք իւ-
րովք. որ վասն միոյ բանի, որ ելանէին ի բերանոյ նորա, բազումք կուտէին ի
վերայ նորա, խոշտանկելով հարկանէին, և բանից բերանոյ նորա անթիւ բա-

զուլմը հաւանէին, զանարգեալին ի նոցանէ մեծապէս պատուէին, զանդոսնալն զովէին, զբամբասանլն բարեբանէին, զատեցեալն սիրէին: Որք ձեռաւք իւրեանց կապէին զձեռս և զոտս նորս, գլխովն իւրեանց և երեսաւք շրջէին առ ուրս նորս, որ բբաւք հարկանէին զչլուխ նորս, թերանովք համբուրէին զդարչապարս նորս:

Կապաւղք ձեռաց նորս՝ կապեալ ձեռաւք կանգնեալ լինէին առաջի նորս. որք աչաւք արհամարհէին զոսելն նորս, իբր անարգող աստուածոց, այնիւ պատկառէին ի նմանէ իբրեւ ի պատկերէ Աստուծոյ. լեզուք՝ որք անարգէին զնա իբրեւ անարգող կողոցն, այնիւ գովէին և բարեբանէին իբրեւ զհրեշտակ Աստուծոյ: Զայնպիսի գայր փառաւոր, զիս՞ող կարացիք գովել անարժան իմով լեզուաւ զովէին երկնայնոց զուարթնոցն, այլ հայր զբլթասէր ի վերջայ որդւոց իւրոց, վասն թերախաւութեան տարահասակ լեզուաց մանկանց իւրոց, ոչ լինի դժկամակ, և հեշտանալովն ոչ լինի անարգեալ ի նմանէ:

Գթա՛յ, Հայր որդեսէր, ի վերայ թերալեզու բարբառոյ իմոյ, որ առեալ համարձակութիւն ի գովութեան քս ըլխել զբարբառ իւր, որ զամենայն կենցաղս քո կատարեցեր վաստակաւք, նախ մատենելով զանձն քո ի զանազան չարչարանս վասն փրկութեան անարգողաց քոց, և յետ այնորիկ շրջելովն և ուսուցանելովն, և կալ հանապազ ի հրովումն որպէս կանթեղ անշիջանելի, իբր պատարուզաւ մարմնոյ վաստակաւք, իբր ձիթոյ կերպարանաւ ողորմութեամբ, և իբր լուսով պայծառութեան վարդապետութեամբ:

Եւ զիտեմ զի աշխատանաւք այնքիկ, որով զբարի պատերազմ պատեալովնցար, զընթացան կատարեցեր, զհաւատսն պահեցեր, և փութացար ի վայելել զարդարութեան պրտակն, և վայելեցեր զոսելն ուր տունն է անդրանկաց, և ձայնս մաքուր տաժողաց, ուր և ցանկան ի խոնարհ նկատելով թանակք հրեշտակաց անտ տրեկեցաւ արմատանալով: Որ աստ քերաւ սրով, հրով, ապտակաւք, թարլամեցուցեալ լինէին, և անդ իբրեւ արմանենի ծաղիկէր, իբրեւ մանուշակ ծիրանանայր լըկալութեան արեամբն, և իբրեւ վարդ պայծառանայր, և իբրեւ խնձոր հոգւովն սրբով վարդագունէր յաստուածաստեղծ դարիտին, այսպիսի փառաւոր փառաւորիւր երիցս երանելին Գրիգորիոս, ի ձեռն աշխատանաց և վաստակոց մարմնոյ իւրոյ, և համբերութեան չարչարանաց, և ճգնութեան և աճեցուցանելով զհաւատս հովուապետին:

Կարծեմ եթէ ասէր ցհոյին աստուածադարդ մարմինն, ով կենդանութիւն իմ, զի ինե կենդանացար ի փառաց նորս, որ կարէ զանմահ գոյացեալդ, սպանանել իբրեւ զմահկանացու օտեղծեալս: Եթե որքան հանգիստ աշխատանաւք իմովք աւանդեցի քեզ, կամ որպիսի սգեստիւ պայծառապէս զարդարեցի զքեզ մեղկութեամբ և գելարանաւք իմովք, կամ որպիսի պատկաւք պայծառութեամբ պայծառացուցի զչլուխ քո զանահարութեան գլխոյ իմոյ, կամ յորպիսի փափկութիւն ծաղկապայծառ եղեմա զուարճացանեմ զքեզ, կոչկոչմամբ իմով և զանազան տանջանաւք, որպէս քե զանցաւոր կենդանութիւնս վայելեցի, և զլոյսս արեգակնայն այս մտանելի, այնպէս և ես փութացայ զի ինե վայելեցես զանանցանելի կենդանութիւնն, և զլոյսն անմատոյց արեգականն արդարութեան:

Ով երանելի փոխմանն այն, ով ցանկալի, ոչ եթէ մահուան, այլ կենդանութեան: Ով փափագելի երթալոյս այս ի մէնջ, յերկրաւորացս յայս, առ երկնաւորսն, ի մարդկանէ առ արարիչն մարդկան, ով բաժանմանդ այդ ցանկալի, որ միաւորութեամբն ընդ մեզ լինի հանապազ: Ով բաժանումն արեւոտանելի մարմնոյ, որ պատճառ է ուրախութեան և ոչ տրամուլեան: Ով մահու մարմնոյ, որ արժանի է զուարճանալոյ, և ոչ արտաճախելոյ: Եւ ես իսկ փոխա-

նակ տրրոմութեան՝ ցանկութեամբ վառեալ պապականիմ, զի արժանի լինի՛ր տեսութեան, քլլ զվրիպունի մարմնոյ լողճութեան, ջիւճայո՛ւջ հոգոյ վաճէ՛ր մամբ, և արժանացոյ դանարժանս, զտկարութիւն մարմնոյ ի բաց մեղկանալ՝

Ով մարմին, իբրեւ անմարմին ժուժկալող, թերեւ կարայց հեռատեւ լինել հոգւով քեզ, որ մարմնով կարի յետոյ եկեայս անտի, ուստի ըստ մարմնոյ արեղանկոյ լուսաւորիչ ծաղեցար, ուստի եկի որպէս դու, այլ ո՛չ իբրեւ զքեզ, այլ և դամ այնիւ որով [դ?]նացեր, իբրեւ զքեզ, այլ ոչ երևիմ որպէս դու:

Եւ արդ ոչ կարայց աղաչանս մատուցունել առ քեզ, զի քոյով բարեխաւսութեամբ զվաճիւցից մի յաւթիվանաց, որ են ի տան հարւ նորա, զոր դու զշարչարեանն և զմեռեալն՝ ճշմարիտ Աստուած քարոզեցեր ի մէջ պաշտօնաւզաց անմահից աստուածոց. արժանաւորեցայց լինել ժառանգող, որ և մեծադունին և պայծառապունին հասեր վաճկման: Սակայն տաւնդոց քոց յիւր բարխաւս առ Տէրն տերանց, և թաղուորն թաղաւորաց, թաղաւորաց զխաղաղութեան ժամանակս պարզեալ և նահատակողէն, յորոյ անուն նահատակեցար, և ամենայն զաւրապետաց և զինուորութեանց պաղատի նոցա յաղթութիւն ի վերայ թշնամեաց, յորոյ անուն զինուորեցար և յաղթեցեր զիմամաւորտին: Եկեղեցեաց և քահանայից, և ամենայն մանկանց եկեղեցականաց դանհերձուճակսն հաստատութիւն շնորհէ, և զիսորին խաղաղութիւն, ի քահանայապետէն երկնաւորէն, յորոյ քահանայացար բարեռք և սրբութեամբ և դամենայն հաստ բանաւորս պահել ասանց միտստ և յափշտակող պալլուէն:

Հայցեալ՝ ի հովուապետէն բարի, որոյ ընտրեցար և կացեր հովիւ քաջ, և ալոսեցեր զվրտտահեցեան ի քեզ, զոչխարս, զխաշինս և զգոռինս, յալապս որոյ առաւելապէս սիրեցեր զնա, և առաւելապէս սիրեցար ի նմանէ, զի ամենեւեկան քահանայք և քահանայապետք, հարք և հայրապետք, կղերիկոսք և ամենայն դասք ստրկաւազաց և ժառանգք առաքելական և կաթողիկէի եկեղեցեաց, զթաղաւորս և զիշխանս, զմեծամեծս և զվտաակալս, զիմաստունս և ըզաւմիկս, զծերս և զտղարս, զայրս և զկանայս, և դամենայն հասակս պահել ի խաղաղութեան, և տալ նոցա հոգի գիտութեան, և ժամանակ զղջման, և ջերս ուրիշն ապաշխարութեան, զի մեղկացին յաղտեղութենէ յանցանաց, և ըզդեհուցուն դպաշտոնացեալ սլեւտս ապաշխարութեան, որով ոչ անարկեացին յուրախալի հարսանեացն, այլ ընդ հրաւիրեալսն և ընդ կոչեցեալսն վաճիլեսցեն զանտրտում ուրախութիւնսն, որոյ լիցի մեղ ամենեցուն վաճիլել շնորհաւք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և փրկչին Յի. Քի. որ շարչարանաւք իւրովք պատարապեցաւ ի վերայ խաշին, և ընդունեցաւ զքեզ առանց դէնլոյ պատարաղ չարչարակցութեամբ նորա, և քահանայացոյց զքահանայապետութիւն իւրոյ, նմա վաճիլէ փառք և պատիւ և իշխանութիւն և երկրպարտութիւն, հանդերձ Հարբ ամենակալի անըկիղբն, և Հոգւոյն կենդանաբարի և համապոյակցի, Սրբոյ Երրորդութեանն և մի Աստուածութեանն, վաճիլ է դոհուլթիւն և փառաւորութիւն, անդադար ըստ հրեշտակական երեքորեան աւրհնութեանցրն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Թարգմանեցաւ լուսազարդ և վաճիլշաշար ճառս այս ի յունականէն ի մերս, հրամանաւ երիցս երանեալ հայրապետին Տեառն Գրիգորիսի Հայոց Մեծաց Կաթողիկոսի, ի ձեռն իմաստուն և հանճարեղ Թարգմանչին Թէոփիստէի: Զոր և մինչև ցայժմ ճրագս այս թաքուցեալ էր ընդ մահճաւք և ծածկեալ էր ընդ գրուանաւ: Իսկ ի հրաման Այ. յայտնեցաւ սա ի Սբ. Վանս յԱրքեպիսկոպոս:

Իսկ իմք պնարժանիս յոգնամեղ և անպիտան վրաւնաւորիս Պաւղոսի

ըղձալի փափաղանաւք գրեալ եղի զսա ի հոյսեալ մայրաքաղաքացեալ Սր. Անաստատ Արքայիւղնիս, ի յիշատակ մեղաւոր հոգւոյ իմոյ և ծնաւդաց իմոց:

Իսկ համբաւ սորա իբրեւ զպսակազարդ թագաւորի, հասեալ ի յիրկնաշման Սր. և աստուածարնակ Անաստատն ի յԱկնկերն, առ լուսասդեստ սբ. և երջունիկ հայրն Ստեփանոս, և նորա առաքեալ որակս և հրամայեաց գրել և աւանդել զսա ի գրուին սբ. Տաճարին Աստուածամաւրն, ի պայծառութիւն տաւնի մեր Լուսաւորչին և յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւդաց իւրոց և իմոյ ամենամեղի: Եւ ես ըստ իմում կարի գրեցի և առաքեցի:

Եւ աղերսալի պաղատանաւք աղաչեմ, ով սրովբէանման դասք լուսներամից, յիշեալիք աղաւթիւք զաստուածապատուեալ հայրն զՍտեփանոս, զառաջնորդ Սր. Ուխտիս Ականց Անաստատիս, և զծնաւդսն իւր և զիմաստուն երաժիշտն զՄանուէլ, որ ուսով իւրով բերաւդ եղի ճառիս ի Վանս, և զաշխատաւդ գրիչս զՊաւղոս և զծնաւդսն մեր և զամենայն ի Քս. հաւատացեալս: Եւ Քս, առհասարակ յիշաւդացդ և յիշեցելոցս ուղորմեսցի, և նմա փառք յաւիտեանս, ամէն:

Հրատ. Ա. Յ. ՍՐՃՈՒՆԻ

(Շար. 5)

